№ 65 Ապրիլ 17 (29) 1880 Ապրիլ 17 (29) № 65

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Մշակ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքները։—Ներքին տեսութիւն։ Մի ուրախալի լուր Ս. Պետերբուրգից։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Աստրախանից։ Նամակ Նոր-Բայազէտից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Ֆրանսիա։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Կ. Պոլսի մատնաժողովի տեղեկութիւնները։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԸ

*Անգլիայի ազատամիտ կուսակցութեան յաղթութիւնը մի կատարված իրողութիւն է արդէն։ Ռիկոնսֆիլդ հրաժարական է տուել հէնց որ տեսել է թէ մեծամասնութիւնը պարլամենտում կը պատկանի ազատամիտ կուսակցութեանը։*

*«Մշակի» երեկվայ համարում ընթերցողը արդէն հեռագիր է կարդացել, որ հաղորդում է թէ ինչ անձինքներից է կազմված նոր մինիստրութիւնը։*

*Մինիստրութեան փոխվելով կը փոխվի և Անգլիայի թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութիւնը։*

*Պահպանողականների անսիրտ և շահասէր քաղաքականութեան տեղ, պէտք է յոյս ունենալ երեւան կը գայ ազատամիտների լայն, մարդասէր քաղաքականութիւնը։*

*Այն անձինք, որոնք ղեկավարներ կը լինեն այժմեան անգլիական մինիստրութեան, պ. պ. Գրլադստոն, Գրէնվիլ, Հարտինգտոն և ուրիշները, արդէն առաջ յայտնի էին իրանց մարդասէր հայեացքներով առ հասարակ և մասնաւորապէս արևելքի քրիստոնեայ ազգերի վերաբերութեամբ։*

*Թիւրքաց հայերից, Կ. Պոլսի ազգային ժողովից, Կ. Պոլսի մեր գործիչներից, մանաւանդ սրբազան պատրիարքից կախված կը լինի այժմ օգուտ քաղել անգլիական նոր կառավարութեան տրամադրութենից և գրաւել մինիստրութեան ուշադրութիւնը Հայաստանի վրա։*

*Մեր կարծիքով անհրաժեշտ կը լինէր այժմ թիւրքաց հայերին կրկին իրանց միջից պատգամաւորութիւն ուղարկել Եւրոպա, մանաւանդ Անգլիա, իրանց հայրենիքի դատը լուսաւորված Եւրոպայի առջև նոր ոյժով և եռանդով պաշտպանելու համար։*

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԻ ՈՒՐԱԽԱԼԻ ԼՈՒՐ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մենք շատ անգամ հաղորդել ենք, գրում է «Голосъ» լրագիրը իր № 99-ի մէջ, որ Թիւրքիայի հետ մեր ունեցած վերջին պատերազմի բեմի վրա սարսափելի սով է տիրում։ Ինչպէս հաղորդեցին Կ. Պոլսի և անգլիական լրագիրները սովամահ լինելու դէպքեր շատ են պատահել, գլուաւորապէս Վանի նահանգում։ Թիւրքաց կառավարութիւնը, իր սովորութեան համեմատ, ոչինչ միջոցներ գործ չը դրեց, թէպէտ առաջուց կարելի էր իմանալ, թէ պատերազմը, որ ազգաբնակութեան բոլոր միջոցները սպառեց և արգելեց երկրագործական աշխատանքներին, պէտք է անպատճառ այն տխուր հետևանքների հասցնէր, որոնք այդպէս անողորմաբար յայտնվեցին այս տարի։ Ողորմելի երկրի ազգաբնակութիւնը դիմեց հասարակութեան բարեգործութեանը և ի պատիւ Անգլիայի պէտք է ասել, որ նա առաջինը ընդունեց այդ հրաւէրը, շտապելով ուղարկել իր բազմաթիւ գործակալներին դրամական միջոցներ սովեալներին բաժանելու համար։ Մի բան էլ ուղարկված է Ռուսաստանից, ռուսահպատակ հայերից, որոնք չափազանց հետաքրքրված են իրանց հայրենակիցների տարաբաղդ վիճակով։

Մենք լսել ենք, որ չորեքշաբթի, ապրիլի 9-ին, Գաղարինսկայա Դարեժնայա փողոցի վրա գտնված զեղարուեստական կլուբի մէջ լինելու է զեղարուեստական երեկոյ, որի եկամուտը նշանակված է Թիւրքաց Հայաստանի սովալլուկ հայ բնակիչների համար։ Այդ երեկոն, բացի բարեգործական նպատակ ունենալուց, նշանաւոր է ինչպէս իր աֆիշայի բազմակողմանի լինելով, նոյնպէս և Ս. Պետերբուրգի արտիստական նշանաւոր ոյժերի մասնակցութեամբ։ Ներելի է յոյս ունենալ, որ մեր բարեգործ հասարակութիւնը անուշադիր չի թողնի ապրիլի 9-ի զեղարուեստական երեկոն։

### ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Մարտի 31-ին

Մենք, կաթոլիկ հայերս, միշտ մեծ բաւականութեամբ ենք կարդում, երբ հանդիպում ենք ձեր պատ. լրագրի մէջ այնպիսի մտքերի, որով յայտնում էք, թէ կրօնական խտրութիւնները մի կողմ թողնելով, այսուհետև իբրև մի հօր զաւակներ, դաշտամկներն են կրծոտել արմատները։ Ոչ սակաւ նպաստել է սովի տարածվելուն վերջին պատերազմը, որի ժամանակ զօրքերի պահպանութեան ծանր բեռը ժողովրդի վրա մնալով, սպառեց նրա ունեցած ուտեստի պաշարը։ Բայց ուրախալի է տեսնել, որ այժմ հարուստը և աղքատը արևելեան եղբայրսիրութեամբ բաժանում են իրանց մէջ գտնված չնչին պարէնը։

Թէև բարեգործ անձինք շատ և խիստ շատ նուիրեցին յօգուտ իրանց սովատանջ եղբայրներին, բայց դեռ աւելի ևս շնորհելու պարտաւոր են։ Այդ պարտքը կատարելու ստիպված ենք, ոչ միայն առաքինութեան զգացմունքից դրդված, այլ մեր սեպհական շահերի կէտից նայելով թշուառ իրողութիւնների վրա։ Մենք, առատութեան մէջ ապրողներս, եթէ այժմ չօգնենք սովեալներին, շուտով կը տեսնենք հեղեղի նման նրանց թափված մեր երկիրներում, և բնականաբար, նրանց պահպանութեան հոգսը դրձեալ մեզ վրա պիտի ծանրանայ։ Ուրեմն, որչափ գթութիւնը, նոյնչափ և իմաստութիւնը պարտաւորացնում է մեզ այդ սոսկալի և համատարած չարիքի առաջը առնել, որ մեր ժողովրդին մահ է սպառնում։ Հայաստանը կարճատև ամառ և երկարատև ձմեռ ունենալով, սովի ժամանակ, աւելի քան միւս երկրները գթութեան և օգնութեան կարօտ է։

Ցանձնաժողովից ստացած տեղեկութիւնների համեմատ, Հայաստանում ներկայ տարվայ աշնանացանքը խիստ սակաւ և աղքատ է. հողագործական անասունները մեծ մասամբ կոտորված կամ գլխված են, և առհասարակ ամբողջ Հայաստանը զուրկ է ցորենից։ Այդ հանգամանքները աչքի առջև ունենալով, շատ հաւանական է մտածել, որ գալոց տարվայ մէջ ևս ժողովուրդը պէտք է ուտեստի պակասութիւն ունենայ։

Մինչև այսօր միայն ձիւնը և սառնակ ձմեռը կարողացան ժողովրդին իր ընիկ երկրի մէջ պահել։ Բայց երբ ձիւնը կը հալվի և ճանապարհները կը բացվին, այն ժամանակ սովեալ ժողովուրդը մարախի նման կը տարածվի դէպի այն գաւառները, ուր կարող է հաց գտնել։

Գուցէ այս ամառ գիւղացիները մեծ մասամբ բանջարեղէններով կերակրվելով, աւելի հացի կարօտութիւն չը պիտի զգան։ Բայց առաջիկայ ձմեռվայ ժամանակ սովը դարձեալ անխուսափելի կը դառնայ, եթէ կանխապէս ժողովրդի համար պաշար նախապատրաստելու անօրինութիւն չը լինի։ Այսինքն, պէտք է նրանց երկրագործական անհրաժեշտ անասուններ տալ, որ համարեա սպառված են, պէտք է սերմ բաժանել դարձեալ ցանք անելու համար, որ աշունքին հունձ ունենան։ Այս բոլորի համար օժանդակութիւն պէտք է, փող պէտք է, որովհետև աղքատ գիւղացին ձեռքում ոչինչ չունի։

Ցանձնաժողովը խոստովանվում է, որ Հայաստանի սովեալ գաւառների ապագայի համար դեռ ևս մի առանձին անօրինութիւն չէ արել, այլ իր ստացած գումարները բաժանել է միայն ներկայումս ժողովրդի կեանքը պահպանելու սովամահ լինելուց։ Բայց ապրիլ ամսից յետոյ ապրուստը աւելի անտանելի կը լինի, որովհետև այդ ժամանակ հացի ամբարները մեծ մասամբ սպառվում են։

Ցանձնաժողովը փափաք է յայտնում, որ բարեբար անձինք այսուհետև աւելի ևս պէտք է կրկնապատկեն իրանց ողորմածութիւնը Հայաստանի սովատանջ ժողովուրդը իր օրհասական կորուստից ազատելու համար։ Եւ այդ կարելի է յուսալ այն ժամանակ միայն, երբ ժողովրդին միջոցներ կը տրվի, երբ ժողովրդին օգնութիւն կը մատուցանվի իր վարը վարելու, իր ցանքն անելու և իր հացը իր ձեռքով պատրաստելու։ Հայաստանի ժողովրդի կեանքը այժմ կախված է այդ օգնութիւնից, որի վրա հրաւիրում է յանձնաժողովը Հայաստանի բարեկամների և նրա վրա մտածողների ուշադրութիւնը։

Ցիշեալ տեղեկութիւններից յետոյ յանձնաժողովը ուղարկում է մեզ մի շարք հեռագրների, որ նա ստացել է զանազան գաւառներից։ Ահա պատճէնները.

1. Վան, 13|25 մարտի, 1880։ Վանայ հայոց Ընդհանուր ժողովը իր բացման օրը խորին շնորհակալութիւն քուէարկեց (Կ. Պոլսի) պատրիարքական Ցանձնաժողովին, որ կազմված է սովեալների օգնութեան համար, այլև բոլոր թէ ներկայ և թէ ապագայ ողորմածներին։ Ատենապետ Խրիմեան արքեպիսկոպոս։ Ատենադպիր Ճանիկեան։

2. Վան, 15/27 մարտի, 1880։ Մարտի 10-ին ձեր հեռագիրը ստացայ։ Մանաժողովը այլ և այլ թուականով ձեր հեռագրերը ստացած և պատասխանած է. իր պարտաւորութիւնները կատարելու մէջ անփոյթ չէ. անդադար աշխատում է։ Բայց ուտեստի սակաւութեան պատճառով դժուարութիւնները օրըստօրէ աւելանում են։ Մեր յոյսը միայն Թիֆլիսից ստանալու ցորենի վրա ենք դրած։ Օգնական կուսակալի Աղաթոն։

3. Վան, 15/27 մարտի, 1880։ Լրագրների մէջ կարդացինք, որ Սեբաստիայի ամբարների ցորեանները պէտք է փոխադրվին Վան։ Որքան էլ արագութեամբ բերելու լինեն, այս ցորեանները հազիւ թէ երկու ամսուայ ընթացքում կարող են Վան հասցնել։ Մինչև այնօրը ժողովրդի կեանքը անապին վտանգի ենթակայ պէտք է լինի։ Ներկայ սովը Գաղատիայի անցեալ սովից աւելի ևս սարսափելի է։ Օսմանեան պետութիւնը հին սովեալ աշխարհին մեծապէս նպաստեց։ Ցուսով ենք, որ առատագութ Սուլթանը թող չի տայ, որ մենք՝ իր թշուառ և հաւատարիմ հպատակներս՝ սովի տառապանքների մէջ չարչարվենք։ Խրիմեան արքեպիսկոպոս։

4. Վան, 15|27 մարտ, 1880։ Ժողովուրդը հազիւ տասն և հինգ օրվայ համար ցորեան ունի։ Ցեղական կառավարութիւնը միայն քաղաքի մէջ տասն և երկու հազար սովեալ մարդկանց հաց է մատակարարում։ Օրական հարիւր տիրհէմ հացը պարտաւորվեցաւ յիսունի իջեցնել։—Մեր ձիրաքար կերակրած սովեալների թիւը չորս հազարից աւելի է։—Մի քանիչ յանձնաժողով ամբարների տէր կարծեցեալ տները խուզարկեց և ոչինչ չը գտաւ։—Ժողովրդի կեանքը պահպանելու համար պէտք է Թիֆլիսից Վան ցորենի փոխադրութիւնը շտապեցնել։—Ցանքի եղանակ է. վերջին երկու ամիսների մէջ ցանվելու և հնձվելու համար շատ հար-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Կ. ՊՕԼՍԻ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ստացանք Կ. Պոլսից «Հայաստանի սովեալաց խնամող կենտրոնական յանձնաժողովի» յայտարարութիւնը, որից քաղում ենք հետևեալը.

Ահա երկրորդ անգամն է, որ կենտր. յանձնաժողովը համառօտ կերպիւ ներկայացնում է իր բարերարներին և նուիրատուներին այն տեղեկութիւնները, որ վերաբերում են Հայաստանի սովատանջներին։ Ցանձնաժողովը հաղորդում է և այն հեռագրները, որ ստացել է զանազան գաւառներից, որոնց մէջ տարածված է սովը, որպէս զի այդ հեռագրների տրամադրութեան համեմատ բարեբար անձինք չտապեն գործել, խորհել և սովատանջ ժողովրդի կեանքը ազատելու հնարների մասին աշխատել։

Որպէս պիտի տեսնվի յանձնաժողովի ստացած հեռագրներից, սովատանջ ժողովրդի մի չղթայ ընկեալ սառնապատ Երզրումից, ձգվում է մինչև տօթային Բաղդադ, և ամփոփում է իր տարածութեան մէջ ռուսական և պարսկական սահմանագիծի գաւառները, անցնելով մինչև Սև ծովի և Պարսից ծոցի ափունքը։ Նօթութեան այդ ընդարձակ տարածութեան վրա, թէև ամեն տեղ տիրում է սովը, բայց իւրաքանչիւր տեղում առաջ է եկել տարբեր պատճառներից։ Մէկ գաւառի մէջ ցանքերը երաշտութիւնից չորացած են եղել, միւսի մէջ անձրևները և խոնաւութիւնն է փտեցրել, երրորդի մէջ կարկուտը կամ մարախն է ապականել հունձքի արտերը, իսկ չորրորդի մէջ

պէտք է եղբայրական ձեռք մեկնենք միմեանց, և թէ լուսաւորչական, թէ կաթոլիկ և թէ բողոքական հայերս գումարվենք այդգայնութեան դրօշներքոյ։ Այդ հրաւէրը որքան գեղեցիկ է, այնքան առաւել նպատակայարմար է։ Բայց ցաւելով պիտի խոստովանենք, որ լուսաւորչական հայերի մէջ տակաւին տիրում է մի սաստիկ նախապաշարմունք դէպի իրանց կաթոլիկ եղբայրները։ Իբրև ապացոյց, ես օրինակ կը բերեմ մի փաստ, որ թէև այնքան նշանաւոր չէ, բայց դարձեալ կարող է ծառայել որպէս մի փոքրիկ յատկանիշ մոլեռանդութեան։ Մարտի 28-ին կատարվեցաւ մեր եկեղեցում «ճանապարհ խաչի» կոչված տօնը։ Եկեղեցին լի էր ամեն սեռի ու հասակի հայ-լուսաւորչականներով, որոնք փոխանակ մտածելու թէ Աստուծոյ տաճարի մէջ են գտնվում, և փոխանակ պատկառանք ցոյց տալու դէպի նրա մէջ կատարվող արարողութիւնները, սկսեցին ծիծաղել, աղմուկ բարձրացնել և եկեղեցին իրանց կատակների հրապարակ դարձնել։ Այսպիսի անկարգութիւններ համարեա ամեն տարի պատահում են եկեղեցում։

Խօսելով հայ-լուսաւորչականների մոլեռանդութիւնների վրա, ես նպատակ չունեմ բոլորովին անմեղադիր կացուցանել մեզ՝ կաթոլիկներիս։ Մանաւանդ մեր հոգևորականների անտարբերութիւնը դէպի ուսումը և մանուկ սերունդի կրթութիւնը պախարակելու արժանի է։ Ըստ որում միշտ աշխատում են ժողովուրդը խաւարի և տգիտութեան մէջ պահել։ Մեր ուսումնարանը մօտ երկու տարի և ութ ամիս մեր պատուելի հայրերի չնորհիւ փակված էր։ Շատերը ցանկանում էին իրանց զաւակներին յանձնել լուսաւորչական հայոց Կարապետեան դպրոցը, բայց քահանաները արգելում էին, ասելով, թէ ձեր որդիներին հաւատքից կը հանեն։ Վերջապէս տէր-Սիմոն հայրը բարեհաճեց բաց անել դպրոցի փակված դռները, և 120 ռուբլի ռոճիկով վարձեց մի ուսուցիչ, որ վարժապետութիւն անէ և մի և նոյն ժամանակ եկեղեցում պատարագի ժամանակ տիրացութիւն անէ։ Երևակայեցէք, թէ ինչ կարող է սովորացնել մի այսպիսի ողորմելի ուսուցիչ, մանաւանդ որ կաթոլիկ եկեղեցում պատարագները այնքան յաճախ են կրկնվում, որ տիրացուները հանգստութիւն չունեն։

Հայ-կաթոլիկ

## ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

մարտի 26

Ձեր լրագրի 48-րդ համարում հաղորդված էր, թէ Ախալցխայի «հայ դպրոցների մի քահանայ-ուսուցիչ ամենաչնչին առիթով անխնայ ծեծում է աշակերտներին և աշակերտուհիներին և թէ անցեալ տարի մի աշակերտ վախճանվեցաւ տէր-հօր ուղղիչ և դաստիարակիչ մեթոդին ենթարկվելով։»

Ստորագրեալքս չտապում ենք յայտնել որ Ախալցխայի հայկական ուսումնարաններից մեր հոգաբարձութեան տակ գտնված Կարապետեան և Եղիսաբէթեան երկսեռ ուսումնարանների մէջ ծեծելը արգելված է և թէպէտ չենք կարող ասել որ այդ կանոնը ամենախիստ կերպով պահպանվում է ամեն մի ուսուցչի կողմից, բայց և բացարձակ կը վկայենք որ վիրոյիշեալ ուսուցիչքահանայի Կարապետեան և Եղիսաբէթեան ուսումնարանների ուսուցիչներից չէ, ինչպէս այդ ստուգվեցաւ ամսոյս 24-ին եղած քննութիւնից, և եթէ, դժբաղդաբար, Ախալցխայի հայկական ուսումնարանների մի աշակերտ ուսուցչի ծեծելով անցեալ տարի վախճանած է (որը մեզ ճշմարիտ չէ թւում) այդ աշակերտը նոյնպէս Կարապետեան և Եղիսաբէթեան ուսումնարանների աշակերտներից չէ։

Հոգաբարձուք՝ Գասպար Մելքոնեանց, Արշակ Յակոբջանեանց, Մկրտիչ Ազնաուրեանց, Գ. Պուտուղեանց, Յ. Գեղամեանց։

## ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Փետրվարի 26-ին

Ձեր պատուական «Մշակ» լրագրի 19-որդ համարում կարդալով Վանեցի համազգի բազմատեսակ արկածներով տանջված եղբարցս ողբալի վիճակը և անժամանակ վերահասած անգութ սովը, խղճահարվելով «Մշակի» ձայնից, իբր հայ, ձեռնարկեցի հանգանակութեան մի քանի հայ և թուրք պարոններից, և հաւաքելով մի գումար, այն է 209 ռուբլի, որի մէջ գցեցի իմ լուման, ուղարկում եմ ձեզ, ահա, խնդրելով որ հասցնէք այդ գումարը յօգուտ Վասպուրականի հայ սովալուկների և բարեհաճէք տպել նուիրատուների հետևեալ ցուցակը. Յարութիւն Աթանասեանց 5 ր., տ. Եղիսաբէթ Աթանասեանց 5 ր., Աստուածատուր Աղամեանց 5 ր., տ. Եկատերինէ Աղամեանց 5 ր., Յովհաննէս Աւագեանց 10 ր., տ. Եղիսաբէթ Աւագեանց 5 ր., տ. Ծաղիկ Քանանեանց 5 ր., Յովակիմ Կիրկիզեանց 6 ր., Այլ ոմն 10 ր., Մարտիրոս Ստեփանեանց 5 ր., Յովհաննէս Դոտաղեանց 3 ր., Գէորգ Բարխուդարեանց 5 ր., Յակոբ Կրանիլչիկեանց 15 ր., տ. Եկատերինէ Կրանիլչիկեանց 10 ր., Յովակիմ Կուզնէցեանց 3 ր., Աւետիս Թումայեանց 5 ր., Բարսեղ Բ. Զաքարեանց 5 ր., Եղբարք Բաբայեանց 6 ր., Մխիթար Դաւթեանց 3 ր., Մկրտիչ Բաբայեանց 5 ր., Բունեաթ Մելիքեանց 10 ր., Եփրէմ Մաղանդարանցեանց 5 ր., Սարգիս Աւետեանց 5 ր., Եղբարք Եղիեանց 10 ր., Մկրտիչ Փաբրիկանտեանց 5 ր., Յովակիմ Մովսիսեանց 5 ր., տ. Եկատերինէ Պօպովեանց 3 ր., Եղիա Սայատնովեանց 3 ր., N. N. 10 ր., Նազարէթ Բօսաովանեանց 3 ր., տ. Անյայտ 5 ր., Եղբարք Տուրբաեանց 5 ր., Ս. Մագթաղինէ Փաբրիկանթեանց 1 ր., տ. Մարիամ Փաբրիկանթեանց 1 ր., Գէորգ Սայատեանց 3 ր., Մաշատի-Թաղի Աստուայայ օղլի 5 ր., Հաջի աղայ 3 ր., Մաշատի Աբբաս 3 ր., Մահմատ-Բաղր 3 ր։ Գումարն է 209 ռուբլ։

Յարութիւն Աթանասեանց

## ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԴԻՑ

—

Մարտի 20-ին

Լրագիրներից երևում է, որ սովը տիրում է Հայաստանում, ուստի ես, տեսուչ Նոր-Բայազէդի արքունական դպրոցի հանդերձ իմ աշակերտներով բանալով ստորագրութիւն յօգուտ թիւրքաց Հայաստանի սովատանջների, գումարեցի 32 ր. 60 կ., որ և ուղարկում եմ ձեզ, խնդրելով բարեհաճէք հացնել ուր հարկն է և տպագրել ձեր պատուական «Մշակ» լրագրում նուիրատուների անունները։ Տեսուչ Յովսէփ Թառումեանց 3 ր., տիկ. Սոնայ Թառումեանց 2 ր., օր. Զարուհի Թառումեանց 50 կ., օր. Մարիամ Թառումեանց 50 կ., օր. Արդաշամ Մամիկոնեանց 50 կ., Եղիազար քահանայ Տէր-Միքայէլեանց 1 ր., Աղաբէկ Բոշնաղեանց 50 կ., Արզուման Մելիք-Ստեփանեանց 80 կ., Ստեփան Տէր-Գէորգեանց 1 ր., Սիսակ Զալդրանեանց 25 կ., Սիրական Տէր-Գրիգորեանց 40 կ., Վանոյ Եղիկեանց 50 կ., Կարապետ Բուդումեանց 1 ր., Գէորգ Սինանեանց 40 կ., Համազասպ Մալաքեանց 50 կ., Արշակ Մակարեանց 70 կ., Խանբաբայ Մաշադի Շարիֆ Օղլի 50 կ., Ստեփան Դայեանց 25 կ., Գաբրիէլ Սմբատեանց 20 կ., Գաբրիել Տէր-Գէորգեանց 30 կ., Թադէոս Մարգարեանց 1 ր., Սըմբատ Կարապետեանց 50 կ., Սիրական Կարապետեանց 50 կ., Եգոր Բուբումեանց 25 կ., Գեղամ Բուդումեանց 25 կ., Լևոն Բուդումեանց 25 կ., Նիկոլայ Նիկողոսեանց 20 կ., Բէկլար Նիկողոսեանց 20 կ., Երուանդ Նիկողոսեանց 20 կ., Իկնատիոս Աղաճանեանց 50 կ., Տիգրան Բաղիկեանց 50 կ., Գէորգ Բաղիկեանց 50 կ., Վահրամ Հայրապետեանց 60 կ., Վանոյ Աղաճանեանց 25 կ., Ներեմեայ Քոչարեանց 30 կ., Հայկարամ Տէր-Միքայէլեանց 50 կ., Գեղամ Անդրիասեանց 30 կ., Մեսրոպ Տէր-Գրիգորեանց 50 կ., Սմպատ Մելիքեանց 1 ր., Խաչատուր Ցարութիւնեանց 40 կ.. Հայրապետ Առաքելեանց 50 կ., Սիրական Գաչկարեանց 50 կ., Գաբրիէլ Գաչկարեանց 40 կ., Յակոբ Տէր Գէորգեանց 45 կ., Երուանդ Մամիկոնեանց 40 կ., Իւան Տէր-Մարտիրոսեանց 50 կ., Միքայէլ Տէր-Մարտիրոսեանց 50 կ., Արշակ Մամիկոնեանց 50 կ., Արմենակ Դաշտոեանց 30 կ., Ալեքսանդր Դաշտոեանց 25 կ., Ասկար աղա Քասամանսկի (աղալար 50 կ., Լևոն Սիմոնաղաեանց 40 կ., Այրապետ Բուրնաղեանց 20 կ., Գեղամ Վարդանեանց 1 ր., Եկոր Մելիք Յակոբեանց 50 կ., Բալաբէկ Տէր-Գէորգեանց 50 կ., Աղաբէկ Տէր-Գէորգեանց 50 կ., Գէորգ Սարուխանեանց 50 կ., Գէորգ Ենկիբարեանց 20 կ., Մկրտիչ Վարդազարեանց 50 կ.։ Ընդամենը 32 ր. 60 կ., փոստի ծախսը չը հաշվելով, որն ես վեր առայ ինձ վրա։

Տեսուչ Յ. Թառումեանց

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 16 ապրիլի

Խնդրեմ հետևեալ լուրը ձեր լրագրի մէջ տպէք։ Կառավարութիւնը թոյլ է տուել Թիֆլիսի հայ կանանց մանաժողովին Աւէտարանի խաղալ յօգուտ Հայաստանի սովեալների, որ կը լինի Զատկից յետոյ առաջին շաբթին։

Վասնորոյ հրաւիրում ենք բոլոր ցանկացողներին իրեղէններ նուիրելու համար դիմել տիկին Խատիսեանին (Լաբորատորնայա փողոց, Գամբրովի տանը), տիկին Տէր-Դաւթեանին (Հայոց փողոց, Շիօևի տանը), տիկին Ն. Վերմիշեանին (Կոլոնիա, Միքայէլեան չօսէ, սեփական տանը), տիկին Կ. Բօտիսեանին (Սոլոլակ, հին-ինստիտուտի փողոց, Ղայամազեանի տանը), տիկին Մ. Խորովեանին (Սոլոլակ, Սաղօվայա փողոց Շաղիսեանի տանը) և Յատուրեանի լամպերի խանութը (Դվորցովի փողոցի վրա)։

Կատարինէ Եւանդուլեան

բապէս թշուառ են։ Գթութեան ենք սպասում։ Դանիէլ Թիւրապեան։

16. ՄՈՒՍՈՒԼ, 26 մարտ, 1880։ Անհնարագրելի է սովեալների տեսարանը, որոնք ամեն կողմից դիմում են դէպի քաղաքը և հաւաքվում են այստեղ։ Մինչև անգամ գարի չը գտնելով, դիակներով են կերակրվում և հիւանդութիւնների ենթակայ են լինում։ Շատերը ամենևին կերակուր չը գտնելով, քաղցածութիւնից մեռնում են։ Սովի տառապանքների և ցաւերի անունով գթութիւն ենք աղաղակում և առաջ օգնութիւն ենք խնդրում։ Ասորի արքեպիսկոպոս Բենիամին։

17. ՊԻԼԷՃԻԿ, 17/29 մարտ, 1880։ Սովը գիւղերի մէջ օրըստօրէ սաստկանում է։ Գիւղացիները թափվեցան քաղաքը և սովամահութեան սկսված լինելը իմացում տուեցին։ արքունի ամբարներից պարտքով ցորեան խնդրեցին հունձքի ժամանակում վճարելու պայմանով, բայց ոչինչ չը կարողացան ստանալ։ Ձեր չնորհած ոսկին բաւական չէ։ Գիւղացիները առհասարակ զուրկ են պաշարից։ Արագ և հզօր օգնութիւնների կարօտ ենք։ Առաջնորդ Պիլէճիկի Ղևոնդ։

18. ԿԷՅՎԷ, 15|27 մարտի, 1880։ Չորս ամիսների ընթացքում ձմեռվայ սաստկութիւնից և պաշարի սակաւութիւնից տանջվելով, կառավարութեանը դիմեցինք, և մրմանց օգնելով ապրեցանք, բայց հիմայ ամենքս էլ հաւասարապէս քաղցած մնացինք։—Աղաչանքով և պաղատանքով կայսերական հզօր գթութեանն ենք ապաւինում։ Կէյվէ, Օրթաքէօի բնակիչների երեսփոխան Անանիա հաճի Աբրահամ։

19. ՆԻԿՈՄԻԴԻԱ, 15/27 մարտ, 1880։ Ձմեռվայ սաստկութեան և պաշարի սակաւութեան պատճառով վիճակիս հայ ժողովուրդը անհնարին տառապանքների ենթարկվեցաւ։ Անասունները ջարդվեցան և մարդիկների մէջ սովամահներ պատահեցան։ Քան հազար քիլէ ցորենի անմիջական կարօտութիւն ունենք։ Տեղական կառավարութեան վկայութիւնը ստանալուց յետոյ, փութացէք մեզ օգնելու։ Առաջնորդ Ստեփան վարդապետ։

կաւոր է Տրապիզոնից հազար Ստամբօլի քիլէ կորեակ (դարը) հասցնել մեզ։ Խրիմեան արքեպիսկոպոս։

5. ԲԻԹԼԻՍ, 24 մարտի, 1880։ Կարօտեալների դարը մինչև այսօր համբերութեամբ տարաւ հացի պակասութիւնը։ Իսկ այժմ յուսահատ, ուժասպառ, դիմում է գթութեան։ Առանց չուտափոյթ օգնութեան, մահուան դատապարտված է։ Ազգային գաւառական ժողով։

6. ԲԻԹԼԻՍ, 25 մարտ, 1880։ Ամենքեանքս հաւասարապէս անօթութիւնից տանջվում ենք։ Յուսահատ ծնողների անխնամ մանուկները փողոցների մէջ թափառում են։ Գթացէք մեզ։ Հայ հռոմէական քահանայ Աւետիս։ (Անընթերցանելի) Աբրահամ։

7. ՎԱՆ, 17|29 մարտ, 1880։ Այսօր մարտ 15 և 16 թւականով ձեր երկու հեռագիրները ստացայ։ Բօլիչայի գործողութիւններն դանդաղ են։ Կառավարութիւնը միայն սովով է զբաղված։—Քընինչ բարձր յանձնաժողովը Վալի փաշայի ձեռնաւորութեամբ, յոյս ունի անպատճառ Մուշից ցորեան ստանալու։—Վերոյիշեալ յանձնաժողովը պատշաճ համարված տեղերում բաժանելու համար, բացի կառավարութեան ամբարներից, Արճէշի վրա քսան և հինգ քիլէ ցորեան հաւաքայ տուաւ։—Ձմեռվայ սաստկութեան պատճառով այն տեղերը, որ հնարաւոր չէ պաշարի մը-թերը ուղարկել, յանձնաժողովս դրամ է ուղարկում։—Ձեր բոլոր հեռագրների միտքը հասկացայ։ Այսօր օդը փոքր ինչ մեղմացած է երևում։ Հէքքիարիի կողմերում սովամահներ են պատահել, բայց դրանց թիւ պաշտօնական տեղեկութիւնը չունենք։ Մեր ջանքերի վրա վստահ ենք։ Օգնական կուսակալի Աղաթօն։

8. Վան, 18|30 մարտ, 1880։ Բօլիչայի վերաբերութեամբ ձեր հրահանգների համեմատ պիտի գործենք, և հարկը պահանջած ժամանակ փոխառութիւն կանենք։—Սովը սաստկանում է. դրա չարչարանքը մինչև հունձքի ժամանակը կը տևի, այս պատճառով հարկաւոր է, օրչափ սովեալների օրական հացի համար ենք մտածում, նոյնչափ և նրանց սերմ տալու համար հոգ տանենք։ Կանխապէս մեր ցոյց տուած տեղերից՝ գլխաւորապէս Մուշից մեզ ցորեան հասցնելու համար դիմում ենք ձեր աշխատութեանը։ Խղճմտանքով աշխատում ենք։ Խրիմեան արքեպիսկոպոս։

9. ՄՈՒՇ, 12|24 մարտ, 1880։ Ամեն աղքատներս հացի կարօտ ենք. քաղցածութիւնից մեռնում ենք. ի սէր Աստուծոյ, արքունի ամբարներից մեզ ցորեան հասցրէք. գթացէք մեզ վրա, և նրա համեմատ հաճեցէք գործել։ Մահմետական և ոչմահմեդական բնակիչների երեսփոխան Իբրահիմ։

10. ՎԱՆ, 21 մարտ—2 ապրիլ 1880։ Սովը օրըստօրէ սաստկանում է։ Մեր թղթակիցների հաղորդած տեղեկութիւնների համեմատ գիւղերի մէջ սովամահ եղողների դէպքեր բազմանում են։—Ապագայ սովի առաջը առնելու համար հարկաւոր է. 1. Մեռած կամ ուտելու համար մորթված հողագործական անասունների պակասութիւնը լրացնել։ 2. Սովից ցրիւ եկած ժողովուրդը կրկին իրանց երկիրը վերադարձնել։ 3. Կառավարութիւնից չնորհում խնդրել, թէ անվճար (պադայէ) մնացած տարիների տուրքերի համար և թէ առաջիկայ երկու տարիների հարկերի համար։ 4. Երկիրը փրկել գլխաւորապէս քրդերի մոլեռանդութիւնից։ (Այստեղ հեռագրական բանակցութիւնները Վանի հետ դադարեցան)։ Խրիմեան արքեպիսկոպոս։

11. ՎԱՆ, 21 մարտ—2 ապրիլ 1880։ Թէև պատրիարգարանից տեղական կառավարութեանը հեռագրվեցաւ, թէ Օսմանեան պետութիւնը 50,000 Ստամբօլի քիլէ ցորեան չնորհել է մեզ, բայց մինչև այժմ չը գիտենք, արդեօք այդ ցորեանը կը ստանանք թէ ոչ։—Բաշկալէ, Կիշէր, Զուլամերիկ, Մահմեդանց, Նորդուզ, Շատախ գաւառներում ոչինչ չենն սերմանել. իսկ ուրիշ տեղերում փոքր ի չատէ սերմ ցանել են։ Այս պատճառով սերմանելու առհասարակ մեծ կարօտութիւն կայ։ Այս տարի անհնար է եգիպտացորեան և գետնախնձոր մշակել տալ ժողովրդին։ Այդ միջոցի մէջ յանձնաժողովիդ հրաւարակած հրահանգը պէտք է սովորեցնենք դրանց։ Խրիմեան արքեպիսկոպոս։

12. ԿԱՐԻՆ, 13/29 մարտ, 1880։ Բասենի մասնախմբի հաղորդած տեղեկութիւնների համեմատ, և ձեր հրամանների համեմատ պիտի գործենք Բասենի համար։—Մեզ հասած մանրամասն տեղեկութիւնների համեմատ Ալաշկերտում մէկ ամսվայ մէջ 106 հայեր սովամահ են եղել. որոնց անունները նամակով ձեզ կը յայտնենք (նամակը դեռ չէ հասել)։—Ղարաքիլիսայի և Ալաշկերտի մէջ աւելի քան 3500 հոգի հացի կարօտ և չքաւոր են։—Եթէ իր ժամանակին, նրանց պիտոյքների համեմատ, արագ օգնութիւն չը հասնի, ապագան խիստ ահաւոր է։—Կանոնաւոր թղթատարութիւն և ճանապարհների ապահովութիւն չը լինելու պատճառով, պարտաւորվեցանք ձեր ուղարկած գումարը Վանից փոխանակագրով մաս առ մաս այնտեղ հասցնել։ Մանաժողովի ատենադպիր Պալլարեան։

13. ԿԱՐԻՆ, 19/31 մարտ, 1880։ Ալաշկերտի, Արա-քիլիսէի, Բասէնի և Վանի վերաբերութեամբ ձեր հրամանները առանձին սուրհանդակով կանոնաւորապէս հրատարակում ենք։—Ձեր նուէրը ուղարկեցինք Ալաշկերտ։— Ալաշկերտի, Բուլանխի և Մանազկերտի շրջակայքում մի կարծէք, թէ արմտիք կան։—Այս կարծիքական արմտիները ձեռք բերելու համար հարկ եղած հրահանգները տուեցինք,—եթէ այդ անկարելի լինի, պէտք է այստեղից ցորեան գնենք և ուղարկենք։ Դիտաւորութիւն ունենք նաև գետնախնձոր գնել և Ալաշկերտ ուղարկել։ Օր և դիշեր աշխատում ենք. վստահ եղէք մեզ վրա։ Մանաժողովի ատենադպիր Պալլարեան։

14. ԿԱՐԻՆ, 6 ապրիլ, 1880։ Ոսկին անօգուտ է Բասէնի մէջ։ Հացի կարօտութիւն կայ, որի գտնելու համար դէպի զանազան կողմեր մարդիկ ուղարկեցինք։—Պաշարի և դրամի համար Վանի հետ մեր հեռագրական բանակցութիւնները շարունակվում են։ Մանաժողովի ատենադպիր Պալլարեան։

15. ՍԸՂԵՐՏ, 17/29 մարտ, 1880։ Ցորենի վաճառուն հոխայի գինը երեք ոսկի է։ Տեղացիք թափվեցան քաղաքը։ Քաղցածութիւնից մեռնելու ատիճան հասած են։ Մահմետականները հաւասարապէս թշուառ են։ Գթութեան ենք սպասում։ Դանիէլ Թիւրապեան։

16. ՄՈՒՍՈՒԼ, 26 մարտ, 1880։ Անհնարագրելի է սովեալների տեսարանը, որոնք ամեն կողմից դիմում են դէպի քաղաքը և հաւաքվում են այստեղ։ Մինչև անգամ գարի չը գտնելով, դիակներով են կերակրվում և հիւանդութիւնների ենթակայ են լինում։ Շատերը ամենևին կերակուր չը գտնելով, քաղցածութիւնից մեռնում են։ Սովի տառապանքների և ցաւերի անունով գթութիւն ենք աղաղակում և առաջ օգնութիւն ենք խնդրում։ Ասորի արքեպիսկոպոս Բենիամին։

17. ՊԻԼԷՃԻԿ, 17/29 մարտ, 1880։ Սովը գիւղերի մէջ օրըստօրէ սաստկանում է։ Գիւղացիները թափվեցան քաղաքը և սովամահութեան սկսված լինելը իմացում տուեցին։ արքունի ամբարներից պարտքով ցորեան խնդրեցին հունձքի ժամանակում վճարելու պայմանով, բայց ոչինչ չը կարողացան ստանալ։ Ձեր չնորհած ոսկին բաւական չէ։ Գիւղացիները առհասարակ զուրկ են պաշարից։ Արագ և հզօր օգնութիւնների կարօտ ենք։ Առաջնորդ Պիլէճիկի Ղևոնդ։

18. ԿԷՅՎԷ, 15|27 մարտի, 1880։ Չորս ամիսների ընթացքում ձմեռվայ սաստկութիւնից և պաշարի սակաւութիւնից տանջվելով, կառավարութեանը դիմեցինք, և մրմանց օգնելով ապրեցանք, բայց հիմայ ամենքս էլ հաւասարապէս քաղցած մնացինք։—Աղաչանքով և պաղատանքով կայսերական հզօր գթութեանն ենք ապաւինում։ Կէյվէ, Օրթաքէօի բնակիչների երեսփոխան Անանիա հաճի Աբրահամ։

19. ՆԻԿՈՄԻԴԻԱ, 15/27 մարտ, 1880։ Ձմեռվայ սաստկութեան և պաշարի սակաւութեան պատճառով վիճակիս հայ ժողովուրդը անհնարին տառապանքների ենթարկվեցաւ։ Անասունները ջարդվեցան և մարդիկների մէջ սովամահներ պատահեցան։ Քան հազար քիլէ ցորենի անմիջական կարօտութիւն ունենք։ Տեղական կառավարութեան վկայութիւնը ստանալուց յետոյ, փութացէք մեզ օգնելու։ Առաջնորդ Ստեփան վարդապետ։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր, հինգշաբթի օր, հրատարակում ենք «Մշակի» վերջին համարը Զատկի տօներից առաջ։ Հետեւեալ համարը կը հրատարակենք հինգշաբթի օր, ապրիլի 24-ին։

—

„Кавказъ“ լրագիրը հաղորդում է որ գեներալ Սկոբելեւ հասաւ Թիֆլիս։

—

Կիրակի, ապրիլի 13-ին, Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու գաւթում կատարվեցաւ թեմական առաջնորդ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկու թաղման հանդէսը։ Տեղական վարչութեան ներկայացուցիչները, քաղաքիս բոլոր հայոց դպրոցների աշակերտները և ահագին բազմութիւն ներկայ էին հանդիսին։ Վրաստանի հկզարիսը, ռուսադաւան, կաթոլիկ և մինչև անգամ մահմեդական հոգեւոր անձինք իրանց ներկայութեամբ պատուեցին հանգուցեալին։

—

Ներսիսեան հայոց Ազգային-Հոգեւոր դպրոցի հոգաբարձութիւնը կարգադրել է կատարել հոգեհանդիստ ապրիլ ամսոյս 27-ին, նոր կիրակի (կըրկնազատիկ) օրը, Յովսէփ Էֆէնդեանցի գերեզմանի վրա Վանքի եկեղեցու գաւթումը, պատարագից յետոյ։ Աղմանայիչատակ հանդուցեալը նուիրել է Ներսիսեան դպրոցին մի նշանաւոր գումար։

—

Ստացանք յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովատանջների 60 բուբլ նուէր Թիֆլիսաբնակ տիկին Նատալիա Ստեփանեան Ղարաջեանի կողմից հետեւեալ նամակով։ «Ցեղական սովորութեան համեմատ պարտաւոր լինելով իմ հանգուցեալ ամուսին Գէորգ Ղարաջեանի հոգեհանդստին մեր բարեկամներին իւղահաց (նազուք) բաժանել, աւելի լաւ համարեցի այդ իւղահացի ծախսով օգնել Վանի մեր սովատանջ եղբայրներին։ Վասն որոյ խնդրեմ ընդունեցէք իմ կամաւոր նուէրս 60 բուբլ յօգուտ սովատանջների և հասցրէք ուր հարկն է։»

—

Ստացանք ԵՐԵՒԱՆԻՑ գաւառական գանձապետ պ. Արտէմ Վարշամեանցից 10 բուբլ յօգուտ Վանի սովալլուկների։

—

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա) քաղաքից մեզ գրում են։ «Այստեղի հայերը, որոնց թիւը 400 տուն են, ոչ եկեղեցի և ոչ դպրոց ունեն և ստիպված են Նորնախիջևան գնալ աղօթելու համար, նոյնպէս այնտեղի դպրոցներ են ուղարկում իրանց զաւակներին։ Ռոստովի մէջ կան հայեր, որոնք երեսուն տարի հայոց եկեղեցի չը տեսան, միջոց չունենալով հեռանալ քաղաքից։»

—

Շնորհակալութեամբ ստացանք Թիֆլիսում հրատարակված հետեւեալ նոր գրքոյկը. «Օտէլլո, կամ Վենետկի մաւր» Վիլիամ Շէկսպիրի ողբերգութիւն, թարգմանութիւն Ստեփան Սալմանեանցի։ Ողբերգութեան հետ միասին հրատարակված է և Շէկսպիրի կենսագրութիւնը։ Գրքի գինը 60 կոպէկ է։ Տպված է Յ. Մարտիրոսեանի տպարանում։

—

Շնորհակալութեամբ ստացանք Շուշու մէջ տրպված Ջոն Վիլիամ Դրէպէրի «Պատմութիւն մըտաւոր զարգացման Եւրոպիոյ» գրքի հայերէն թարգմանութիւնը։ Թարգմանողը Արիստակէս Վ. Սեդրակեանն է։ Տպված է Միրզայան Մատեոսի Յակոբեանցի տպարանում։

—

Շնորհակալութեամբ ստացանք Կ. Պոլսի մէջ տպված «Հայկական բառաքննութիւն» գիրքը, հեղինակութիւն Նորայր Ն. Բիւզանդացու։ Տպագրութիւն Պ. Քիրիշճեանի։

—

Պ. Միրզոյեվ խնդրում է մեզ յայտնել հետեւեալը. «Իմ պատկերահանդէսը, որտեղ կան հին և նոր արհեստագէտների հեղինակութիւններ, բաց կը լինի ապրիլի 21-ից մինչև մայիսի 21-ը, ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 6½ ժամը։ Պատկերահանդէսի մէջ կան շատ նոր պատկերներ հետեւեալ հեղինակների. Այվազովսկու, Բրիւլովի, Բոգոլիւբովի, Միկեշինի, Բայկովի, Լագորիոի և այլ նշանաւոր հեղինակների հին ինքնուրոյն նկարներ։ Մուտքի վարձը առհասարակ 20 կ. կը լինի, իսկ չորեքշաբթի և ուրբաթ օրերը մուտքի վարձը 50 կ. կը լինի։ Պատկերահանդէսից ստացված բոլոր եկամուտը նշանակված է յօգուտ Վանի սովատանջների։»

—

Ընթերցողը գիտէ որ երկու ամսվայ ընթացքում, փետրվարի սկզբից մինչև ապրիլի սկզբը մենք ուղարկեցինք սովելոց խնամող Կ. Պոլսի մասնաժողովին 22,000 բուբլ։ Այս օրերս նամակ ստացանք յիշեալ մասնաժողովից որ այդ գումարից 16 հազարը ստացված է Կ. Պոլսում։ Մենք հեռագրով ենք փոխադրում փողերը, բայց մասնաժողովը ստացման մասին նամակով է պատասխանում։ Երևի մնացած 6 հազար բուբլ այժմ ստացված է արդէն։

—

Կ. Պոլսի մասնաժողովից ստացած և «Մշակի» ներկայ համարում տպված տեղեկութիւնների մէջ ընթերցողի ուշադրութիւնն դարձնում գլխաւորապէս Ալաշկերտի հեռագիրների վրա։ Մինչ այդ հեռագիրները կարդալուց յետոյ էլ էջմիածինը կը պահի իր մօտ յօգուտ Ալաշկերտցիների հաւաքած 17 հազար բուբլ գումարը։

—

Ներկայ համարում ընթերցողը կը կարդայ Ախալցխայից ստացած Հայ-կաթոլիկ ստորագրութեամբ մի նամակ։ Ամօթ մեզ, հայ-լուսաւորչականներիս, որ մենք դարձեալ չարունակում ենք հալածել մեր կաթոլիկ և բողոքական եղբայրներին։ Մինչ մենք դեռ միջին դարերումն ենք ապրում և տասն և իններորդ դարի լուսաւոր ոգին ոչինչ կրթողական ներգործութիւն չէ ունեցել մեզ վրա։

—

«Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունի, եթէ մի առանձին զբաղմունք չարգելի նրան, դիտաւորութիւն ունի պատրաստել այս տօն օրերին մի հրապարակական դասախօսութիւն հայերէն լեզուով «Սովի մասին»։ Եթէ այդ դիտաւորութիւնը կաջողվի, դասախօսութիւնը կը կարդացվի տօներից յետոյ, յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովատանջների։

—

Ստացանք յօգուտ Վանի սովատանջների 2 բ. Թիֆլիսաբնակ Աւետիք Վարդապետեանից։

—

Թիֆլիսաբնակ Նիկողայոս Մէլիք-Հախնազարեանցի ձեռքով ստացանք 2 բ. 40 կ. յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովատանջների որ նուիրել են հետեւեալ անձինք. Գանջունցեանց 1 բ., Անանեանց 1 բ., Ա. Իւզբաշեանց 40 կ.։ Ընդամենը 2 բ. 40 կ.։

—

Խմբագրութիւնը ստացաւ Թիֆլիսաբնակ պ. Գրիգոր Բէժանեանցից 2 բուբլ յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովելոց։

—

„Кавказъ“ լրագրում կարդում ենք, որ նորին Բարձրութեան Կովկասեան փոխարքայից Պետական խորհուրդին ներկայացրած առաջարկութիւնը թոյլ տալ և Անդրկովկասում պատաւոր հաշտարար դատաւորներ ընտրել, հաստատվեցաւ Պետական խորհրդից։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՆԳԼԻԱ

—

Լրագրերների մէջ հետեւեալ տեղեկութիւններ ենք կարդում անգլիական նոր պարլամենտի անդամների ընտրութիւնների մասին։

Զորեքշաբթի, ապրիլի 14-ին վերջանում են անգլիական պարլամենտի անդամների ընտրութիւնները։ Ազատամիտները կատարելապէս յաղթեցին և այժմ 100 ձայների գուտ մեծամասնութիւն ունեն։ Լօնդօնի մամուլը դադարեց ընտրութիւնների մասին գրել և այժմ իր գլխաւոր առաջնորդող յօդուածները նուիրում է ապագայ մինիստրութեան կազմակերպութեան։

Անգլիական բազմաթիւ լրագիրների կարծիքով, անկարելի է ենթադրել, որ նոր մինիստրութեանը Գլադստոն չը մասնակցի։ Ընտրութիւններից երևաց, որ ազատամիտները իրանց յաղթութեամբ պարտական են Գլադստոնին և այն եռանդին, որով նա առաջնորդում էր ընտրողական կռիւներին։ Թէ ազատամիտ և թէ պահպանողական լրագիրները խոստովանվում են, որ առանց Գլադստոնի մասնակցութեան, այժմ ոչ մի մինիստրութիւն հաստատ չէ կարող լինել։ Դժուարը միայն այն է, թէ ինչպիսի դեր պէտք է տալ Գլադստոնին նոր մինիստրութեան մէջ։

Գործի այդ կողմը քննելով «Economist» լրագիրը ազատամիտ մինիստրութեան անձնական կազմակերպութեան ամբողջ մի նախագիծ է առաջարկում։ Այդ նախագիծը հետեւեալն է. Գլադստոն առաջին մինիստր, Գրենվիլ արտաքին գործերի, կոմս Դերբի ներքին գործերի, բացի այդ լրագրի կարծիքով զանձարանի կանցլերի պաշտօնը նոյնպէս պէտք է Գլադստոնին յանձնել։ Անգլիայում առհասարակ ընդունված չէ, որ առաջին մինիստրը լինի նոյնպէս և զանձարանի կանցլեր, բայց այդպիսի օրինակներ եղել են։

Պէտք է խոստովանել որ ազատամիտների համար շատ լաւ կը լիներ, եթէ Գլադստոն համաձայներ կառավարել երկրի ֆինանսները։ Անգլիական ժողովուրդը այնքան հաւատում է այդ երևելի ֆինանսիստի ֆինանսական ընդունակութիւններին, որ երբ լուր տարածվեց, թէ Գլադստոն պէտք է կառավարէ անգլիական զանձարանը, Լօնդօնի բօրսայի վրա անգլիական արժէթղթերի գները բարձրացան։ Անգլիացիների կարծիքով միայն նա կարող է բարելաւել պահպանողականներից վատացրած անգլիական ֆինանսների դրութիւնը։ Եթէ «Economiste» լրագրի առաջարկած նախագծի համեմատ մինիստրութիւն կազմվեցաւ, մի երկու կամ երեք տարիներից յետոյ պահպանողականներից թողած 8,000,000 ֆունտ ստերլինգ դեֆիցիտի հետքը անդամ չի մընայ։

Լօնդօնում ամենքը համոզված են, որ թագուհին Գլադստոնին չի յանձնի մինիստրութեան կազմելը, այլ կը հրաւիրի կոմս Գրենվիլին կամ Հարտինգտոնին։ Հրաւիրվածը կարող է հրաժարվել և Գլադստոնի վրա մատնացոյց լինել, բայց կասկածելի է, արդեօք կը հեւևի թագուհին այդպիսի ցուցմունքին թէ ոչ, որովհետև թագուհու յայտնի անձնական հակակրութիւնը դէպի Գլադստոնը վերջին տարիների ընթացքում Բիկոնսֆիլդի ազդեցութեան տակ աւելի էլ սաստկացել է։

Հեռագիրը հաղորդեց, որ մինիստրութեան կազմելը Հարտինգտոնին յանձնվեցաւ։

## ՖՐԱՆՍԻԱ

—

Փարիզի 18-ը ընտրողական շրջանի պատգամաւոր Կլեմանսօ նորերումս իր ընտրողների առաջ ֆերնանդօի ցիրկի մէջ մի ճառ կարդաց, որից քաղուածքներ տպված են լրագիրների մէջ։ Իբրև արմատական կուսակցութեան առաջնորդ, իբրև ազգային ժողովի արմատական բաժնի ներկայացուցիչ, նա իր ճառով նկարագրեց արմատական կուսակցութեան ամբողջ նախագիծը։ Յիշեցնելով Գամբետայի խօսքերը. «ամեն բանի մէջ մինչև վերջը պէտք է գնալ», Կլեմանսօ աշխատում էր ապացուցանել, որ կառավարութիւնը միշտ կէս ճանապարհի վրա է կանգնում։ Դեռ 1877 թուականին առաջարկվեցաւ քաղաքային վերանորոգութիւնների նախագիծը, բայց մինչև այժմ նրա քննութիւնը չեն սկսել։ Մամուլի ազատութեան օրէնքը դեռ ևս չէ մշակված, այլ օրէնքի տեղ միայն համբերողութիւն կայ։ Ժողովների հաւաքվելու և ընկերութիւնների ազատութեան օրէնքները դեռ ևս յետաձգվում են և առժամանակ կառավարութիւնը փակում է կլուբներ և կարգադրում է, որ հասարակական կարգապահութեան դէմ ճառեր չարտասանվեն։ Ազգային ժողովների մեծամասնութիւնը մինչև այժմ չը կարողացաւ համաձայնվել կառավարութեան հետ դատաւորների անփոփոխութեան օրէնքը վերացնելու վերաբերութեամբ։ Ժողովրդական լուսաւորութեան համար մի բան արված է, բայց ինչ կը նշանակի 3 միլիարդի բիւջէտ ունենալ, իսկ ուսումնարանների վրա միայն 50 միլիոնից քիչ աւելի ծախսել։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը պարտադիր և ձրի ուսման նախագիծ առաջարկեց, բայց այդ նախագծի մէջ չէ ասված, թէ ուսումը աշխարհային կը լինի։ Եւ որովհետև կրօնական կրթութիւնը պարտադիր է ուսումնարանների մէջ, ուրեմն աշխարհային կրթութիւնն էլ պարտադիր չը դարձնելը կը նշանակի բռնաբարել խղճի ազատութիւնը։ Ֆերրիի օրէնքի 7-դ յօդուածի, կառավարութեան հրամանների և եզուիտներին արտաքսելու մասին Կլեմանսօ ասաց, որ այդ կարգադրութիւնները անօգուտ և վտանգաւոր են։ Կղերական հարցը վճռելու համար միայն մի միջոց կայ, այն է բաժանել եկեղեցին պետութիւնից և ընկերութիւններին ազատութիւն տալ։ Կառավարութիւնը հոգևորականութեան մէջ զանազանում է մի քանի տարրեր, որոնք չեն կարող համաձայնվել պետական կարգի սկզբունքների հետ, այն տարրերից, որոնք կարող են համաձայնվել։ Բայց հոգևորականութիւնը չէ կամենում ճանաչել այդ զանազանութիւնը. հոգևորականութիւնը, ինչպէս մի մարդ, ինչպէս մի անհատ, պաշտպանում է միաբանութիւններին։ Մինիստրը հաստատում է, որ կրօնական միաբանութիւնները կառավարութենից ճանաչված եկեղեցուց օտար հիմնարկութիւններ են. Կլեմանսօի կարծիքով, դրա մասին կարող են դատել միայն պապը և հոգևորականութիւնը։ Քննելով այն պատճառները, որոնք արգելում են հանրապետութեան զարգացմանը, Կլեմանսօ ասում է, որ սենատը արգելում է գործել պատգամաւորների ժողովին. ճառի շարունակութեան մէջ ասված է, որ կօմունային մասնակցողները պէտք է կատարեալ ներում ստանան։

# ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Ալէքսանդր Միրզոեվ խնդրում է մեզ յայտնել որ նրան հեռագրով թոյլ է տուած իր գեղարուեստական հանդիսի համար, յօգուտ Վանի հայ սովելոց, վերցնել պալատից, Նորին Կայսերական Բարձրութեան փոխարքայի սեփական սենեակներից զանազան պատկերներ, նկարներ, բոյսեր և ծաղիկներ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Продается двухъ-этажный домъ на Абасъ-Абатской площади. Объ условіяхъ узнать въ типографіи Меликова, Сололакская улица, № 12.

Ծախվում է երկու յարկանի մի տուն Աբաս-Աբատեան հրապարակի վրա։ Պայմանների մասին հարցնել Մելիքովի տպարանում, Սօլօլակկայա փողոց, № 12.

1—3

ԹԻՖԼԻՍ քաղաքում ՍԱՂԻ վրա գտնուած Գ. ՄԻՐԶՈՅԵՎԻ նոր ՇԻՆՈՒԹԵԱՆ հանդէպ, նախկին կնեազ ՄՈՒԽՐԱՆՍԿԻՈՅ անուանված ԿԱՐԱՎԱՆՍԱՐԱՅՈՒՄ, որ պատկանում է այժմ ի սեպհականութիւն Գ. ԳԷՈՐԳ ԱՋԻՋԵԱՆՑԻՆ և Գ. ՅԱԿՈԲ ՂԱԶԱՐԵԱՆՑԻՆ, տըրվում է վարձով ՅԱՐՄԱՐԱՒՈՐ ՍԵՆՆԱԿՆԵՐ օտար քաղաքացի երթևեկ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ. ցանկացողք կարող են իջևանել յոյժ բաւականացուցիչ վարձով:—

3—3 (2)

Գ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳԵԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿՆՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

10—10

# ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

# „ԿԱՅԾԵՐ"

## ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

## Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում: Ստորագրվել կարելի է ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մեշակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դօկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ վկայական ունի և գիտէ ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԵՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները, դասեր է տալիս: Հասցէն Կամենդանտսկայա փողոց, տուն Շախմուրադովի № 23:

4—4 (2)

Դուրս եկաւ մամուլի տակից և ԾԱԽՎՈՒՄ է ԹԷ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և ԹԷ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Ծատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Արծրունւոյ: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

5—5

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է I և II գիլդիայի վաճառականներին, որ 1) Ներկայ ապրիլի 24-ին առաւօտեան 11 ժամին, առևտրական Վարչութեան բնակարանի մէջ Աղարէգովի (Իսամանովի) տանը պէտք է լինեն Առևտրական Վարչութեան ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ընտրութիւնները: Պէտք է ընտրվեն մի ՆԱԽԱԳԱՀ, նախագահի մի ԸՆԿԵՐ և երկու ԱՆԴԱՄՆԵՐ: 2) որ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն տեղացի վաճառականները (յօդ. 84 առևտրական իրաւունքի հարկերի պօլօժենիայի), բացի անձինքներից, որոնք ընդհանրապէս իրաւունք չունեն ընտրութիւններին մասնակցելու, օրինակ 25 տարեկան հասակին չը հասածները, յանցանքների պատճառով դատաստանին ենթարկվածները և այլն:

3—3

## ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շտեյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմբօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առանձնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Մ. Միանսարեանցի ի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4|2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով:

1. Հայկական Արևաբ, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . . 70 կ.

4 Հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 բուբլու:

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.

1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 բուբլու:

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես: 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 բուբլու: . . . . . 10 կ.

4. Գունատ մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը: № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. ստօպան, կամ 480 թերթը, 4 բուբլի, մօտ 340 ստօպ, մօտ 1360 բուբլու: Թերթը մի կոպէկից պակաս:

5. Տողաշարներև տողացանցեր մեծ թաքաղա, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 բուբլու, թերթը . . . . . 5 կ.

6. Կօմբ ուսուցչապետի և անգղիացւոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300: . . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 բուբլու:

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 բուբլու:

Կարելի է դիմել Ս. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Ցիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրօնական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Դուրս եկաւ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԴԱՇՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՄԲ

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուզանաճեանցի: Իւրաքանչիւր օրինակի գինն է մէկ բուբլի: Վաճառվում է յօգուտ Վանայ սովատանջների Թիֆլիսի բոլոր երաժշտական մագազիններում: Գումարող առնողներին զիջումն կը լինի: Օտարաքաղաքացիք դիմում են հետեւեալ հասցէով. Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянъ, на Петхайнской улицѣ, собственный домъ № 13. Յանկացողները ստանալ միասին և «Ցիսնաղի Տաւիղ» երգարանը, պէտք է ուղարկեն մէկ բուբլ երեսուն կոպ.:

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փղրը և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով. Կօնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկ. գրավաճառանոցում:

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:

2. Դօկտօր Բօկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:

3. Ֆրէյդուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.:

4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:

5. Դամառ-Քաթիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:

6. Նոյնը կազմած — 25 կ.:

7. Սիլվիո Փէլլիքօի Ֆրանչիսկացին Փրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ներանչէական, Լէօփարդիի առ Իտալիան. Տաֆերնոյ ծերը: Ա. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գիօրն է — 70 կ.:

10—10

ՍԱԼԵԱՆԻՑ նոր ստացվեցաւ ԹԱՐՄ ՀԱՏԻԿԱՒՈՐ ԽԱՒԵԱՐ: Ծախվում է Մի-քայէլեան ԿԱՄՈՒՐՋԻ վրա, ՄԻՐԶՕԵՎԻ շինութեան մէջ № 11 և 12, Ա. ՄԻՐՈՒՄՕՎԻ խանութում:

3—6

## ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(РАСПРОДАЖА)

ՎԵՐՋԻՆ ԵՒ ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

## ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՏՐԱՍՏ ՇՈՐԵՐԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄԻՐԱՑԷԼԵԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՎՐԱ

## ՆԱՍԻԲԵԱՆԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

| | |
|---|---|
| Տրիկօի ամառվայ պալտօ | 10 ր. և աւելի |
| Ժուկեսի ձեռք շորը | 10 ր. — |
| Վիզիտի | 15 ր. — |
| Սև սերտուկի | 25 ր. — |
| Տրիկօի գոյնաւոր վարտիքը | 3 ր. — |
| Սև վարտիքը | 7 ր. — |
| Որսի ժակետ | 8 ր. — |
| Առաւօտվայ ժակետ | 8 ր. — |
| Երեխայոց տրիկօի զգեստը | 2 մինչև 14 տարեկան 3 ր. — |
| Խալաթներ | 12 ր. — |
| Պարուսինի զգեստներ | 5 ր. — |

Նոյն տեղ ծախվում են կանանց և տղամարդկանց շապիկներ, կալսօններ, կանանց կօֆտաներ, նոյնպէս դիւլպաներ, կտաւի մանժէտներ, թաւիներ, թաշկինակներ, ձեռնոցներ, պէնիւարներ և ժիլետներ:

2—10

Տպագրութեան համար պատրաստ են. «Դօն Կարլոս» (Հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկոտի, «Արրահամ Լինկօլն՝ ստրուկներին ազատող» Վիլհելմ Հօֆմանի, և Մօլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մօլիէրի հետ «Տարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նօտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶԱՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվին ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹԻՒԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մասնաւոր և բանկային վէքսէլներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, ես անուավոր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Дозволено Цензурою 16 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսօնի Типографія А. А. Михельсона